նուազէ և տէր երկրիս[1] խոռ աչօք է ընդ ֆռանկս և ընդ դեսպանս. և եհան հաթթիշէրիֆ, ասա և յամենայն երկիր տէրութեան իւրոյ, թէ մի ոք ի յունաց, ի թաւշանից, ի հայոց և յայլոց ազգաց ռայէից իմոց բնիկ յերկրէ իմմէ եղելոց դարձցի ի կրօնս ֆռանկաց, և ընդ թեւօք նոցա մտեալ և թէրճիման գրեցեալ ազատ համարեսցի զինքն, այլ ամենայն բնիկ ծնեալք յերկրի խաբանս տայցեն, և սկսան կալնուլ զյոյնս և զթաւշանս զֆռանկացեալսն, ոչք և փոխեալ զզգեստս սկսան առնուլ խարանս. այս եղև ի դեկտ. 23։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1759 ցուն. 19։ [Կ. Պոլիս])։

մբ.

Լսեմք վասն սառաֆօղլու սարգիս վարդապետին լինիլ ի հիւանդութեան ի քիայ կղզւոջ, որ է սախըզ. և դեռ յաքսորս է, և ասեն, թէ չիք նմա հնար դառնալոյ ի Կոստանդնուպոլիս։ (Հ. Իգն. առ Մելգոնեան, 1759 փետր. 17. ի Կոստանդնուպոլիս)։

մգ.

Այսմիկ չաբաթոջ սրբազան Պապն[2] Գառն Աստուծոյ օրհնեաց և բաժանեաց, զի 9 ամաց հետէ ոչ էին օրհնեալ. և սկիզբն ամսոյս այսորիկ եկն եհաս ի Հռոմ անտոն եպիսկոպոսն ղպթոց ազգէ զոր աւելի քան զհազար ամ է ոչ ոք եպիսկոպոս այնմիկ ազգէ ի Հռոմ եկեալ էր. այլ ասեն այս է առաջինն զկնի եփեսոսի սրբոյ ժողովոյն ի Հռոմ դիմեալ։ (Յովսեպ եպս. առ Մելգոնեան, 1759 ապրիլ 21. [Հռովմ])։

մդ.

Առի զգիր քո ցանկալի գրեալ առ իս ի սամաթիա քաղաքի մեծի մասին պարծանաց վասն երանելւոյն [Տէր Կոմիտասայ] տապանի անդ լինելոյ մարմարիոն քարամբ քանդակագործ զարդարելոյ, և քոյդ աշխատութեան կցորդ և պատճառ գոլոյ։... Կարծեմ, թէ ի վաղուց հետէ լուր մահուան դաբուխոան իրիցուն հասեալ իցէ յականջս ձեր. զի իբր թէ յանկարծ անհաղորդ մեռաւ. գիտես դու զնա, թէ զիարդ վերակացութիւն առնէր գերեզմանի երանելւոյն, և գանձէր զդրամս հանապազ, և կեղծաւորէր առ երեսս ուխտաւորաց, պատմելով զվարս և զսքանչելիս նորա, և կատարէր զկարգ մարտիրոսաց։ (Հ. Իգն. առ Հ. Մկրտիչ, 1759 յուլիս 19. ի Կոստանդնուպոլիս)։

մե.

Ի տօնանմային քրիստոնեայք նորոգեցին զժամս իւրեանց. արդ՝ զպէշքտաշու ժամն ոչ միայն նորոգեցին, այլ և փոքր մի մեծցուցին։ Բայց ահա յաւուրս յայսոսիկ զայն ժամ պէշքտաշու հրամանաւ թագաւորին ի հիմանց փլուցին տաճիկք վասն ոչ տալոյ հայոց չուխատարի միոյ գկրօնս, որպէս եռուն այլոց տաճկաց, և այն զի չուխատարն խնդրէր զմի քսակ դրամ։ Եւ իբրև իմացան թէ չուխատարն արգուհալ է արարեալ թագաւորին վասն ժամուն, թէպէտ խարճեցին իբր երեսուն քսակ, զի արգելցի բանն փլուզանելոյ զժամն, բայց ոչ կարացին։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1759 օգոստ. 1. [Կ. Պոլիս])։

---

1. Մուստաֆա Գ.։
2. Կղեմէս ԺԳ.։